

## ԿԱՐՄԻՔ

Շուշանիկ Իշխանի Զաքարյանի «Բայի սեռի ձևաբանական, շարահյուսական և իմաստային յուրահատկությունները ժամանակակից թուրքերենում (հայերենի գուգադրմամբ)» վերնագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Հայկական թյուրքագիտությունը իր սկզբնավորումից ի վեր ուշադրության կենտրոնում այն է՝ գիտական հետաքրքրությունների ծիրում է պահել թյուրքական լեզուների տարատեսական յուրահատկությունների ուսումնասիրությունը: Պատահական չէ, որ հայ մասնագետ-թյուրքագետները աշխարհի տարբեր գիտական դպրոցներում գլխավորել կամ առաջատար տեղ են ունեցել թյուրքական լեզուների ուսումնասիրության և դասավանդման գործում: Ուշագրավ է, որ անգամ թուրք մասնագետները երբեմն-երբեմն նշում են և՛ Օսմանյան կայսրությունում, և՛ հանրապետական Թուրքիայում հայ թյուրքագետ-լեզվաբանների ներդրման ու գործունեության մասին:

Արդեն անկախ Հայաստանում այս, կարելի է ասել, ավանդույթը կայուն շարունակություն է գտել և ներկայացվող ատենախոսությունը այդ շարունակականության դրսևորումներից է: Մա նաև պատասխան է երբեմն հնչող այն մերկապարանոց մեղադրանքներին հատկապես թուրք-ադրբեջանական շրջանակներից, թե հայկական թյուրքագիտությունը գերքաղաքականացված է, ոչ օբյեկտիվ և թուրքատյաց շեշտադրումներով: Հայ մասնագետները այսօր էլ ուսումնասիրում են թուրքերեն լեզվի առանձնահատկությունները, դրանց մասին հրապարակում հոդվածներ, ուշագրավ վերլուծություններ: Բացի այդ, Հայաստանը համաշխարհային շատ հեղինակավոր գիտական, կրթական կառույցների կողմից ընդունվում է որպես արևելյան լեզուների դասավանդման կարևորագույն կենտրոն:

Շուշանիկ Զաքարյանի ատենախոսությունը, ինչպես արդեն ասացի, վերոնշյալ ավանդույթների շարունակությունը լինելով՝ նվիրված է թուրքերենի բայի սեռի ձևաբանական, շարահյուսական և իմաստային յուրահատկությունների քննությանը: Աշխատանքը իրականացվել է հայերեն, ռուսերեն, թուրքերեն և անգլերեն գիտական ուսումնասիրությունների, թուրքերեն տարբեր աղբյուրների

պրակտիկ ուսումնասիրության հիման վրա: Աշխատանքն ունի գիտական արդիականություն նաև ժամանակակից թուրքերենի զարգացումների ուսումնասիրության առումով: Ինչպես իրավացիորեն նկատել է ատենախոսը, թուրքերենի բայի սեռի հետ կապված դեռ շարունակվում են գիտական բանավեճերը և սույն աշխատանքը կարող է ևս մեկ քայլ լինել ճշմարիտ եզրահանգումների գալու ճանապարհին: Հայկական թուրքագիտության մեջ նշված թեման այս ընդգրկմամբ ուսումնասիրվում է առաջին անգամ և իր մեջ նորույթ է պարունակում: ԵՊՀ-ում թուրքերենը դասավանդվում է երկար տասնամյակներ և այդ գործընթացը ուղեկցվում է ու հիմնված է գիտական հիմնարար ուսումնասիրությունների վրա, որոնք հետո տեղ են գտնում դասագրքերում, ուսումնամեթոդական ձեռնարկներում: Այսինքն՝ աշխատանքի կիրառական նշանակության մեջ կարող ենք նաև առանձնացնել Հայաստանում թուրքերենի ավելի լավ, ավելի հիմնավորված դասավանդում ապահովելը և դրա կատարելագործմանը նպաստելը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և գրականության ցանկից:

Առաջին գլխում հանգամանակից կերպով ներկայացվում են թուրքերենի բայի սեռի ուսումնասիրության տեսական հիմքերը, տրվում են նաև հայերենի հետ համեմատություններ և զուգորդումներ: Երկրորդ գլուխը նվիրված է թուրքերենի ներգործական սեռի իմաստաքերականական հայեցակերպին և ներկայացվում է այդ սեռի և ուղիղ խնդրի փոխհարաբերությունները: Երրորդ գլխում քննվում է կրավորական, իսկ չորրորդ գլխում անդրադարձ և փոխադարձ սեռի առանձնահատկությունները: Հինգերորդ գլուխը նվիրված է թուրքերենում պատճառականության սեռային դրսևորումներին: Եզրակացություններում իմի է բերված աշխատանքը և արված են եզրահանգումներ:

Դրական գնահատելով արված աշխատանքը՝ նպատակահարմար ենք գտնում ատենախոսության հետ կապված անել որոշ դիտարկումներ.

1. Երկրորդ գլուխը իր ծավալով համեմատաբար փոքր է և այն կարելի էր որպես ընդարձակ ենթագլուխ միացնել գլուխներից որևէ մեկին:

2. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի սխալներ. մասնավորապես՝ հղումներում երբեմն պահպանված չեն գիտական ապարատին ներկայացվող հիմնական տեխնիկական չափանիշները:
3. Աշխատանքում խոսվում է հայտնի հայ լեզվաբան Հակոբ Մարթայան-Դիլաչարի մասին և ներկայացվում է նրա դերը ժամանակակից թուրքերենի կայացման գործում, սակայն ավելորդ չէր լինի թեկուզ տողատակում ներկայացնել նրա մասնակցությունը թուրքական պետականորեն պարտադրված ապագիտական լեզվաբանական թեզերի մշակման աշխատանքներում:

Նշված դիտարկումները ամեննին չեն ստվերում արված աշխատանքը, այն կատարված է պատշաճ մակարդակով, ունի արդիական գիտական նշանակություն և պարունակում է նորույթ: Սեղմագրում արտացոլված են ատենախոսության ընդհանուր դրույթները և եզրակացությունները, իսկ տպագրված հոդվածներում քննության են առնված թեմայի առանձին խնդիրներ: Ուստի, հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, որ Շուշանիկ Իշխանի Զաքարյանի «Բայի սեռի ձևաբանական, շարահյուսական և իմաստային յուրահատկությունները ժամանակակից թուրքերենում (հայերենի գուգադրմամբ)» վերնագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի սահմանած չափորոշիչներին, իսկ հեղինակը արժանի է իր հայցած քանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին Ժ.02.02 «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան



Ռուբեն Մելքոնյանի ստորագրությունը համապատասխանում է

ԵՊՀ գիտական քարտուղար՝ Բ.Գ.Թ. Մ. Հովհաննեսյանի




01.12.2022